ՔԱՀԱՆԱՅԻՑ ԺՈՂՈՎ
ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Ա.թ. հուլիսի 29-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում գումարվեց ներքին թեմերի հոգևորականների մեկօրյա նիստ՝ նախագահությամբ Կաթողիկոսական Տեղապահ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանի: Նիստին ներկա էին Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանը, ներքին թեմերի առաջնորդ սրբազանները և Հայաստանի քահանա հայրերը:

Առավոտյան նիստը սկսելուց առաջ Մայր Աթոռ ժամանած հոգևոր հայրերը, հանդիսադրությամբ Ամենապատիվ Տեղապահի՝ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի, կատարեցին հոգեհանգիստ նորոգ հանգուցյալ Հայրապետի շիրիմի վրա: Ապա Վեհարանի հանդիսությունների դահլիճում աղոթքով և Սբ. Գրական ընթերցումներով սկսվեց աշխատանքը, և «Հովիվն քաջ» բնաբանով հանդես եկավ Գերշ. Տ. Գրիգորիս արքեպս. Բունիաթյանը:

Նիստի նպատակն էր ներկայացնել քահանայության առջև դրված ներկա առաքելության հրամայականը, անդրադառնալ դրանց լուծման եղանակներին, ինչպես նաև ծանոթանալ քահանայությանը մտատանջող խնդիրներին ու հիմնահարցերին և լուծում տալ դրանց:

Տ. Արսեն արքեպիսկոպոս Բերբերյանն իր ողջույնի խոսքում ընդգծեց, որ հայ հոգևորականի այսօրվա գերխնդիրը ժողովրդի բոլոր խավերին Ավետարանի խոսքն ուղղափառ ընկալումով մատուցելն է, որտեղ պետք է ուսումնասիրվեն ժամանակակից բոլոր մեթոդներն ու միջոցները և մեր փոքրիկ հոտը առաջնորդել հոգևոր և բարոյական աշխարհի ոլորտներ ազգային ավանդական փորձի վրա հիմնված և կարևոր դեր ունենալ 2000 թ. Քրիստոսի ծննդյան տարեդարձին քրիստոնյա մյուս ազգերի շարքում մեր ազգային նկարագրով:

Զեկուցող քահանա հայրերը (Տ. Արտակ ավ. քհն. Սիմոնյան, Տ. Մեսրոպ քհն. Արամյան) շեշտեցին քահանա-ծուխ հարաբերության վերականգնման, ծիսակատարությունների դաստիարակչական բնույթի նորովի արժևորման և եկեղեցու հոգևոր ժառանգության կենդանի պահպանման անհրաժեշտությունը, որի ամբողջական և հաջող իրագործումը հաստատումն է Աստծո Թագավորության:

Տեղի ունեցավ մտքերի աշխույժ փոխանակում, որտեղ քահանա հայրերը հանդես եկան իրենց մտահոգություններով, հարցերով ու ցանկություններով: Ներկաները ուխտեցին շարունակել մնալ գիտակից իրենց կոչումին,

սրբությամբ պահպանել 2000-ամյա բյուրեղացած ավանդությունը, որ գալիս է մեր հայրերից և եկեղեցում կուտակված հոգևոր ժառանգությունից:

Նիստի արդյունքներն ամփոփեց և օրհնության խոսքով հանդես եկավ Կաթողիկոսական Տեղապահ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանը (տե՛ս էջ 14), որն իր խոսքում շեշտեց քահանայի կյանքում ինքնամփոփման և խոկումի կարևորությունը՝ իր առաքելությունը նպատակասլաց և գիտակից կերպով կատարելու համար: Տեղապահ Սրբազանը կոչ ուղղեց քահանաներին՝ մնալ Աստծո սպասավորի բարձրության վրա և այդ վեհությանը հաղորդակից դարձնել մեր ժողովրդի բոլոր զավակներին:

ՍԱՄԵՆ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ